

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԱՔՏ-ԳՀԾՁԲ-20/3-1**

ք. Երևան

«02» ապրիլ 2020թ.

Վարչապետի աշխատակազմն, ի դեմս Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա **ծառայության առավելագույն գինը կազմում է 4 000 000 (չորս միլիոն) ՀՀ դրամ:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է:

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է՝ 4500000 (չորս միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է՝ 10134500 (տաս միլիոն հարյուր երեսունչորս հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է:

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակցից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն

միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտավորությունները փոխանցվում են Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների՝ հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 18-րդ հոդվածների պահանջները:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ԿԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554

[Handwritten signature]

(ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ազրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Հեռ. (055) 84-13-12
Էլ. փոստ: m-bi-r@mail.ru

[Handwritten signature]

Բաղրասարյան

(ստորագրություն)

Կ.Տ.



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ն» դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	Ծառայության			մատուցման	
			չափման միավորը	ընդհանուր առավելագույն գինը /«Ն» դրամ/	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը
1	50111130-3	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ՝ (Համաձայն հավելված 1.1)	դրամ	4 000 000	1	ք. Երևան, մատակարարի կողմից նշված հասցեն	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 25-ը

* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կառավարական տուն, 1
 «Ն» ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011024040
 ՀՎՀՀ 02505554

[Handwritten Signature]
 (ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «Ակբա - Կրեդիտ - Ազրիկոլ - բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829
 Հեռ. (055) 84-13-12
 Էլ. փոստ: m-bi-r@mail.ru

[Handwritten Signature]
 (ստորագրություն)

Բաղդասարյան



Կ.Տ.

Գ Ն Ա Ց ՈՒ Ց Ա Կ*

ՀՀ դրամ

Ծ/Ծ	SU-1, SU-2 Ծառայությունների և SU-2-ի ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Չափաբաժին 1
		Վազ 2121, Վազ 21120, Ռիազ Պատրիոտ, Ռիազ 390902
1	2	3
1	Բռնկման համակարգի ստուգում	1332
2	Սառեցման համակարգի ստուգում	1332
3	Յուղման համակարգի ստուգում	1332
4	Արտացման համակարգի ստուգում	1332
5	Կցորդման համակարգի ստուգում	1332
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	1332
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1332
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	1332
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1332
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	1332
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	1332
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	1332
13	ABS համակարգի ստուգում	1332
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1332
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1332
16	Թափքի փիճակի ստուգում	1332
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	1332
SU-1 ներառվող ծառայությունների անվանումը		
1. Շարժիչ		
18	Շարժիչի հանում և տեղադրում	28862
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	28862
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	28862
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	37742
22	Շարժիչի վերանորոգում	88806
23	Շարժիչի բարձրիկի հանում և տեղադրում	5328
24	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	6660
25	Նույնը աջի համար (V6)	11101
26	Նույնը ձախի համար (V6)	11101
27	Շարժիչի բլուկի գլխիկի հանում և տեղադրում	24422
28	Նույնը աջի համար (V6)	28862
29	Նույնը ձախի համար (V6)	28862
30	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	6216
31	Շարժիչի գլխիկի վերանորոգում	19981
32	Փականի խցուկի փոխարինում	1332
33	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	8881
34	Նույնը V6-ի ձախի դեպքում	15541
35	Նույնը V6-ի աջի դեպքում	15541
36	Նույնը DOHC դեպքում	8881
37	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	11101
38	Հրիչի փոխարինում SOHC	1332
39	Նույնը DOHC դեպքում	888
40	Ատամնավոր փոկի փոխարինում	19981
41	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	6216
42	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	17761
43	Մխոցային օղակների փոխարինում	37742

44	Թափանիվի հանում և տեղադրում	11101
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
45	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	444
46	Յուղի պոմպի փոխարինում	2220
47	Ղեկավարման բլոկի վերանորոգում	6660
48	Բռնկման կարգավորում	2220
49	CO կարգավորում	1332
50	խարճարակի հանում և տեղադրում	2220
51	խարճարակի վերանորոգում	2664
52	Օդի գտիչի փոխարինում	444
53	Ինժեկտորի ֆորսունկայի փոխարինում	2220
54	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	6660
55	Բեմզամղիչի փոխարինում	2220
56	Վառելիքի գտիչի փոխարինում	2220
57	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	3552
58	Տրամյորի հանում և տեղադրում	1332
59	Տրամյորի վերանորոգում	888
	3. Սառեցման և արտածման համակարգ	
60	Յովիարի փոկի հանում և տեղադրում	888
61	Յովիարի հանում և տեղադրում	13321
62	Ռադիատորի հանում և տեղադրում	6216
63	Նույնը կոնդիցիոների դեպքում	6660
64	Ռադիատորի վերանորոգում	15541
65	Թերմոստատի փոխարինում	3552
66	Ջրի պոմպի փոխարինում	5328
67	Ընդարձակող բաքի փոխարինում	1332
68	Խլարարի հանում և տեղադրում	2220
69	Նույնը DOHC դեպքում	22201
70	Ռադիատորի փողրակի հանում և տեղադրում	2220
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
71	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	6660
72	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	4440
73	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	11101
74	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	2220
75	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	2220
76	ՓՏ-ի հանում և տեղադրում	13321
77	ՓՏ-ի վերանորոգում	42183
78	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	2220
79	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	11101
80	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	4440
81	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	15541
82	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	26642
83	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	24422
84	ԱՓՏ-ի վերանորոգում	155410
85	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	6660
86	ԱՓՏ-ի յուղի գտիչի փոխարինում	6660
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
87	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	8881
88	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում վերանորոգումով	28862
89	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	6660
90	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	5328
91	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգ.	4440
92	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	5772
93	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում	6660
	6. Առջևի և հետևի կամրջակներ	0
94	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	11101
95	Առջևի կամ հետևի կամրջ. լիկատար քանդում և հավաքում	28862
96	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	15541
97	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու հանում և տեղադր.	5328
98	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	3552
	7. Կախոց	
99	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	11101

100	Տրավերսի հանում և տեղադրում	6660
101	Չախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	5328
102	Անվակունդի առանցքակալի փոխարինում	5328
103	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	3552
104	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5328
105	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	5328
106	Չախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	2664
107	Չախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	2220
108	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	2220
109	Ջսպանակի հանում և տեղադրում	2220
110	Ջսպակի հանում և տեղադրում	2220
111	Ջսպակի վռանների փոխարինում	3552
112	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2664
113	Ներքևի լծակի հանում և տեղադրում	2220
114	Ներքևի լծակի վռանի փոխարինում	2220
115	Առջևի աջ կամ ձախ ձգանի հանում և տեղադրում	2886
116	Միջին ձգանի հանում և տեղադրում	2220
117	Երկրորդ ձգանի հանում և տեղադրում	888
118	Վերևի լծակի հանում և տեղադրում	2664
119	Վերևի լծակի վռանների փոխարինում	3108
120	Գնդե հողակապերի փոխարինում	3552
121	Ծայրականների հանում և տեղադրում	2220
122	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	3552
123	Առջևի կայունարարի վռանի փոխարինում	1776
124	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1776
125	Հետևի զսպանակի փոխարինում	2220
126	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2220
127	Հետևի ձգանողի հանում և տեղադրում	3552
128	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	3552
129	Կայունարարի կանգնակների հանում և տեղադրում	3552
130	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	2664
131	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	2664
132	Անվաբացքի կարագավորում	3552
133	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1332
8. Ղեկային մեխանիզմ		
134	Ղեկային կալունի հանում և տեղադրում	6660
135	Նույնը V6-ի համար	13321
136	Ղեկային կալունի վերանորոգում	22201
137	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	2220
138	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	3552
139	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	6660
140	Նույնը DOHC դեպքում	6660
141	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	2220
142	Նույնը DOHC դեպքում	2220
143	Հիդրոուժեղարարի փողրակի հանում և տեղադրում	2220
144	Նույնը DOHC դեպքում	2220
145	Նույնը կոնդիցիոների դեպքում	6660
146	ՀՈԻ ՂԿ-ի հանում և տեղադրում	5328
147	ՀՈԻ ՂԿ-ի վերանորոգում	5772
9. Արգելակային համակարգ		
148	Գլխ. գլանի հանում և տեղադրում	6660
149	Գլխ. գլանի վերանորոգում	6660
150	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	6660
151	Բանվ. գլանի հանում և տեղադրում	6660
152	Բանվ. գլանի վերանորոգում	6660
153	Արգելակային համակարգի օդահանում	2220
154	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	3552
155	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	3552
156	Առջևի սուպպորտի վերանորոգում	3552
157	Հետևի սուպպորտի վերանորոգում	3552
158	Արգելակային փողրակի փոխարինում	888
159	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	1776
160	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	1776

161	Հետևի կոճղակների փոխարինում	1776
162	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	2220
163	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	2220
164	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	2220
165	ABS-ի հանում և տեղադրում	4440
166	ABS-ի վերանորոգում	8881
167	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	4440
168	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	2220
10. Էլեկտրասարքավորում		
169	Էլեկտրասարքավորման վերանորոգում	2220
170	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	4440
171	Գեներատորի հանում և տեղադրում	3552
172	Նույնը V6-ի դեպքում	5328
173	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	5328
174	Գեներատորի վերանորոգում	3552
175	Մեկնարկիչի հանում և տեղադրում	3552
176	Մեկնարկիչի վերանորոգում	3552
177	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1332
178	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1332
179	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	2220
180	Վազքաչափի հանում և տեղադրում	3552
181	Վազքաչափի ճոպանի հանում և տեղադրում	2220
182	Սաքերի պանելի հանում և տեղադրում	6660
183	Արագաչափի հանում և տեղադրում	4440
184	Ազդանշանի հանում և տեղադրում	2220
185	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	2220
186	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	4440
187	Ազդանշանային համակարգի տեղադրում	4440
188	Մազնիտոլայի տեղադրում	2220
189	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	2220
190	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	6660
191	Էլ/հաղորդալարերի հիմն. խուրցի հանում և տեղադրում	6660
192	Էլ/հաղորդալարերի երկրորդ. խուրցի հանում և տեղադրում	4440
193	Էլեկտրական տվիչների փոխարինում	1332
194	Էլեկտրական անջատիչների փոխարինում	888
195	Վառոցքի մոմի փոխարինում	1332
196	Կոնդիցիոների լիցքավորում	5328
197	Կոնդիցիոների վերանորոգում	2220
11. Այլ ծառայություններ		
198	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում գին 1 քառ.դմ - ի համար	2220
199	Ավտոմեքենայի լվացում	666
200	Անիվի հանում և տեղադրում	444
201	Անվաղողի վերանորոգում	1776
202	Անիվի բայանսավորում	444
203	Անիվի վայց	2220
204	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ - ի համար	2220
205	Խառատային աշխատանքներ 1 ժամ	2220
206	Փականագործի աշխատանքներ 1 ժամ	2220
207	Քարշարկի ծառայություն գին 1կմ, համար	666
SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները		
1.Շարժիչ		
1	Շարժիչի բլոկ	202033
2	Շարժիչի գլխիկ	166510
3	Բարձիկ	11101
4	Շարժիչի գլխիկի միջադիր	5772
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	244215
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	35522
7	Շարժիչի փական դուրս մղող	1332
8	Շարժիչի փական ներս մղող	1332
9	Շարժիչի փականի խցուկ	444
10	Ծնկաձև լիսեռ	53283
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	2220

12	Ծնկածն լիսեռի խցուկ հետևի	2220
13	Ծնկածն լիսեռի արմատական ներդիրներ	4440
14	Ծնկածն լիսեռի շարժաթևային ներդիրներ	8881
15	Հենակային տափողակ	888
16	Մխոց	17761
17	Մխոցային օղակներ	15541
18	Ատամնանիվ	4440
19	Ատամնավոր փոկ	177611
20	Շղթա	11101
21	Հիդրոծգան	6660
22	Հրիչ	2220
23	Հիդրոհրիչ	4440
24	Բաշմակ	3552
25	Հանգստարար	2220
26	Թափանիվ	6660
27	Թափանիվի պսակ	1332
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	444
29	Շկիվ	6660
30	Շարժաթև	4440
31	Կարտերի միջադիր	888
32	Միջադիր	1332
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
33	Յուղ շարժիչի հանքային, 1 լիտր (Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	977
34	Յուղ շարժիչի կիսասինթետիկ, 1 լիտր (Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	1332
35	Յուղ շարժիչի սինթետիկ, 1 լիտր (Բարձրորակ՝ մեքենայի մակնիշին համապատասխան)	1998
36	Յուղի գտիչ	1110
37	Յուղի պոմպ	11101
38	Յուղի պոմպի շարժաբեր	22201
39	Յուղի ռադիատոր	4440
40	Յուղի փողրակ	1776
41	Յուղի ծորակ	2220
43	Վառոցքի մոմ	1776
44	Բենզոլբաք	15541
45	Խառնարակ	1332
46	Խառնարակի վերանորոգման հավաքածու	13321
47	Ինժեկտորի ֆորսունկա	4440
48	Վառելանյութի մղիչ էլեկտրական	4440
49	Վառելանյութի մղիչ մեխանիկական	1332
50	Վառելանյութի գտիչ	13321
51	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	2220
52	Վառելանյութի փողրակ	3552
53	Աքսելերատորի ճուպան	4440
54	Օդի գտիչ	1776
55	Ջերմաստիճանային տվիչ	6660
56	Յուղի տվիչ	6660
57	Բաշխիչ լիսեռի տվիչ	6660
58	Օդի ծախսի տվիչ	19981
59	Արագաչափի տվիչ	6660
60	Հովհարի տվիչ	6660
61	Ջրի տվիչ	6660
62	Բենզոլբաքի տվիչ	6660
63	Մարման ընթացքի կարգավորիչ	6660
64	Մարման ընթացքի տվիչ	6660
65	Ղեկավարման համակարգիչ	24422
66	Պարապ ընթացքի տվիչ	6660
67	Դրոսելային փականի տվիչ	6660
68	Թթվածնի տվիչ	6660
	3. Սառեցման և արտածման համակարգ	
69	Հովհարի փոկ	3552
70	Հովհար	6660
71	Ռադիատոր	28862
72	Ընդարձակող բաք	6660

73	Ուղիատորի փողրակ	3552
74	Թերմոստատ	6660
75	Ջրի պոմպ	10612
76	Ջրի պոմպի առանցքակալ	2220
77	Ջրի պոմպի թևակ	6660
78	Սառեցման հեղուկ 1 լիտր	1332
79	Ջրի պոմպի տնամնիվ	444
80	Հոլովակ	888
81	Փոկ	2220
82	Փոկ կոնդիցիոների	666
83	Ծորակ	2220
84	Խլարարի ներդիր	1332
85	Խլարարի կախոց	1332
86	Կրոնշտեյն	888
87	Անուր (խամուտ)	222
88	Խլարար	26642
89	Ռեզոնատոր	11101
90	Վառարանի ռադիատոր	17761
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
91	Կցորդման բանվորական գլան	11101
92	Կցորդման գլխավոր գլան	9769
93	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	5328
94	Կցորդման տանող սկավառակ	8881
95	Կցորդման տարվող սկավառակ	8881
96	Կցորդման առանցքակալ	6660
97	Կցորդման փողրակ	2220
98	Փոխանցման տուփ	310819
99	ՓՏ-ի առջևի խցուկ	3552
100	ՓՏ-ի հետևի խցուկ	3552
101	ՓՏ-ի առանցքակալ	5328
102	ՓՏ-ի առաջնային լիսեռ	11101
103	ՓՏ-ի միջանկյալ լիսեռ	14209
104	ՓՏ-ի եղանիկ	7993
105	ՓՏ-ի ատամնամիվ	8437
106	Համաժամիչ	6660
107	Մուֆտ	18649
108	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	7993
109	ԱՓՏ-ի գտիչ	15541
110	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	33302
111	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	35522
112	Տրանսմիսսիոն յուղ, 1 լիտր	3552
113	ԱՓՏ յուղ, 1 լիտր	5328
114	ՓՏ-ի առաջնային լիսեռ	444
115	Հերմետիկ 125գր	2220
	5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ	
116	Բաշխիչ տուփ	82145
117	Բաշխիչ տուփի խցուկ	6660
118	Բաշխիչ տուփի առանցքակալ	7993
119	Բաշխիչ տուփի ատամնամիվ	14209
120	Բաշխիչ տուփի լիսեռ	1554
121	Կարդանային լիսեռ	11101
122	Էլաստիկ մուֆտ	11101
123	Կարդանային լիսեռի միջանկյալ հեմակ	9325
124	Կարդանային լիսեռի խաչուկ	7104
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
125	Հետևի կամ առջևի կամրջակ	111007
126	Ռեդուկտոր	24777
127	Գլխավոր փոխանցման ատամնամիվների կոմպլեկտ	4440
128	Դիֆֆերենցիալ	4440
129	Դիֆֆերենցիալի սատելլիտ	4440
130	Տանող ատամնամիվի խցուկ	3552
131	Տանող ատամնամիվի առանցքակալ	3552
132	Դիֆֆերենցիալի առանցքակալ	6660
133	Կիսատնի	9769


134	Կիսասունու առանցքակալ	4440
135	Կիսասունու միջադիր	3996
136	Կիսասունու խցուկ	3108
137	Կարգավորիչ տափողակ	1110
	7. Կախոց	0
138	Տրավերս	11101
139	Կրոնշտեյն	888
140	Չախ կամ աջ հողակապ	15541
141	Չախ կամ աջ հողակապի փոշեթիկնոց	2664
142	Անվակունդ	11101
143	Անվակունդի խցուկ	2220
144	Անվակունդի ներքին առանցքակալ	6660
145	Անվակունդի արտաքին առանցքակալ	6660
146	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	6660
147	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	6660
148	Չախ կամ աջ հողակապի խցուկ	2220
149	Հարվածամեղմիչի թասակ	4884
150	Չսպանակ	6660
151	Առջևի հարվածամեղմիչ	11101
152	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	2220
153	Հարվածամեղմիչի վռան	1332
154	Ներքևի լծակ	11101
155	Ներքևի լծակի վռան	1776
156	Վերևի լծակ	111007
157	Վերևի լծակի վռան	2220
158	Գնդե հողակապ	4440
159	Առջևի կայունարար	6660
160	Առջևի կայունարարի վռան	1332
161	Առջևի կայունարարի առջևի վռան	1110
162	Հետևի զսպանակ	4440
163	Հետևի ցնցամեղմիչ	8881
164	Հետևի մետաղաձող (շտանգա)	6660
165	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	1776
166	Հետևի անկյունագծային լծակ	4440
167	Անկյունագծային լծակի վռան	2220
168	Չսպակ (ռեսսորա)	22201
169	Չսպակի վռան	3552
170	Չսպակի միջադիր	3552
171	Չսպակի բռնիչ	3552
172	Աջ կամ ձախ ձգան	3330
173	Ծայրակալ	3552
174	Չգան մեջտեղի	2220
175	Անվահեծ	8881
	8. Ղեկային մեխանիզմ	
176	Ղեկային կալուն	38009
177	Ղեկային կալունի առանցքակալ	2220
178	Ղեկային կալունի խաչուկ	6660
179	Հիդրոուժեղարար	4440
180	Հիդրոուժեղարարի փոկ	2220
181	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	4440
182	Հիդրոուժեղարարի պոմպ	8881
183	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	4440
184	Ղեկային ձող	2220
185	Ղեկային ձողի ծայրակալ	2220
186	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	2220
187	Ճոճանակ	6660
188	Ճոճանակի վռան	888
	9 Արգելակային համակարգ	
189	Գլխ. գլան	9769
190	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	3552
191	Վակուումային ուժեղարար	11101
192	Բանվ. գլան	6660
193	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	2220
194	Արգելակային փողոթակ	888

195	Սուպպորտի ուղղորդիչ	1776
196	Սուպպորտի մանժետ	2220
197	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	11101
198	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	8881
199	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	6660
200	Առջևի արգելակային սկավառակ	8881
201	Հետևի արգելակային սկավառակ	8881
202	Ձեռքի արգելակի ճոպան	2220
203	ABS-ի տվիչ	2220
204	Արգելակային հեղուկ, DOT-3 - 800գրամ	1110
205	Արգելակային հեղուկ, DOT-4 - 800գրամ	1776
206	Ձեռքի արգելակի ճոպան	3552
	10 էլեկտրասարքավորում	
207	Գեներատոր	28862
208	Գեներատորի դիողային կամրջակ	2220
209	Գեներատորի ռելե	6660
210	Գեներատորի առանցքակալ	2220
211	Ստարտեր	39518
212	Ստարտերի ռելե	6660
213	Ստարտերի ածուխ	4440
214	Բենդեքս	4440
215	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	4440
216	Առջևի լապտեր	13321
217	Առջևի թարթիչ	2220
218	Հետևի լապտեր	4440
219	Հետևի թարթիչ	2220
220	Արգելակային լապտեր	4440
221	Լամպ	2220
222	Էլեկտրական անջատիչ	444
223	Էլեկտրական տվիչ	444
224	Էլեկտրական չափիչ սարք	444
225	Բռնկման կողպեք	2220
226	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	19981
227	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	6660
228	Վառոցքային լարերի խուրց	6660
229	Վառոցքի մոմի ծայրակալ	888
230	Վազքաչափ	888
231	Վազքաչափի ճոպան	2220
232	Արագաչափ	2220
233	Ազդանշան	4440
234	Ապակեվազիչ	1332
235	Ապակեվազիչի շարժիչ	2220
236	Դռների կենտրոնական փական	2220
237	Ազդանշանային համակարգ	8881
238	Մագնիստոլա	11101
239	Էլեկտրաամբարձիչ	4440
240	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	444
241	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր <i>գին 1դ/մ վերանորոգման համար</i>	6660
	Ընդամենը	4500000

Տեխնիկական սպասարկման ընթացքում կատարվելու է՝
 SU – 1 ծառայություն / տեխ. զննում ըստ հավելվածի/,
 SU – 2 ծառայություն/ տեխ.սպասարկում և վերանորոգում ըստ հավելվածի:
1 - պարտադիր պայման է օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի չօգտագործված լինելը,
2 - տեխնիկական սպասարկման կայանը պետք է գտնվի երևան քաղաքի տարածքում: Տեխսպասարկման կայանը պետք է հագեցած լինի առնվազն 3 էլեկտրական ամբարձիչներով՝ առնվազն երեք ու կես տոննա բարձրացնելու կարողությամբ, անվաբացքի ուղղման սպենդոլ, ինժեկտորների լվացման սպենդոլ, փափքի ուղղման սպենդ, չորացման, դիփահոր: Ծառայությունները պետք է մատուցվեն փրանսպորտային միջոցը տեխսպասարկման կայանում գրանցելու օրվանից՝ երեք օրացուցային օրվա ընթացքում, եթե փոխհամաձայնությամբ ավելի երկար ժամկետ սահմանված չէ:
***Ծառայության միավոր գները հաշվարկված են սույն Պայմանագրի 4.2 կետով սահմանված բանաձևի համաձայն:**

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն, 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011024040
ՀՎՀՀ 02505554



(ստորագրություն)

Կ.Տ.



Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա - Կրեդիտ - Ազրիկոլ - բանկ» ՓԲԸ
Հ/Հ 220083335012000
ՀՎՀՀ 08417829
Հեռ. (055) 84-13-12
Էլ. փոստ: m-bi-r@mail.ru



Վ.

Բաղդասարյան
(ստորագրություն)

Կ.Տ.

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**											Ընդամենը	
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր		դեկտեմբեր
1	50111130-3	ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	-	-	-	1400000	1400000	1400000	2400000	2400000	2400000	4000000	4000000	4000000	4 000 000

* Վճարումները կիրականացվի փաստացի մարտցված ծառայությունների դիմաց:

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Վարչապետի աշխատակազմ
 ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
 Կառավարական տուն, 1
 ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
 Հ/Հ 900011024040
 ՀՎՀՀ 02505554



(ստորագրություն)

Կ.Տ.

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «Ակբա - Կրեդիտ - Ազրիկոլ - բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829
 Հեռ. (055) 84-13-12
 Էլ. փոստ: m-bi-r@mail.ru



Վ.

Բաղդասարյան
 (ստորագրություն)

Կ.Տ.

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____

հհ _____

հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

		Մատուցված ծառայությունների					
		քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն

Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն